07 փետրվարի 2019թ.
ժամը 11⁰⁰ թիվ՝ 4

<<Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն>> ՓԲԸ
ք. Երևան Ֆանարջյան փ. 76 շ.

Արձանագրություն

ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/3-1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

**գնահատող հանձնաժողովի նախագահ**
/դեղատան վարիչ/ Ն. Գասպարյան
**հանձնաժողովի անդամներ**
/դեղագործ/ Ս. Անանյան
/հաշվապահ/ Ն. Դավթյան
**Հանձնաժողովի քարտուղար՝**
Հարություն Օհանյան

*ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, գնահատող հանձնաժողովի նիստը համարվում է իրավազոր և հայտարարվում է բացված*

**Հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին**

*Հանձնաժողովի նախագահ Ն. Գասպարյան*

1. **Ընդունել ի գիտություն որ՝**

**1.1** Գնահատող հանձնաժողովի քարտուղար Հ. Օհանյանը համաձայն՝ ՀՀ կառավարության 14 մայիսի 2017 թվականի թիվ 534-Ն որոշման 1-ին կետով հաստատված «էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգ»-ի /այսուհետ՝ Կարգ/ 19-րդ կետի և գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.10-րդ կետի պահանջներին կատարել է հարցում՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /այսուհետ՝ Կոմիտե/, առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

**2. Մասնակիցների մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների համապատասխանության գնահատման մասին**

2.1 Հիմք ընդունելով Կարգի 44-րդ և 59-րդ կետերի դրույթները և հրավերով սահմանված որակավորման պահանջների առկայությունը հիմնավորելու նպատակով Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի վերաբերյալ հանձնաժողովի անդամների տրված գնահատման թերթիկները (կցվում են). գնահատող հանձնաժողովը որոշեց

Գեղամ Կիրակոսյան ՍՊԸ-ին մասնակցության իրավունքի և որակավորման պահանջները գնահատել բավարար,

Հայկ Ֆարմ ՍՊԸ-ին մասնակցության իրավունքի և որակավորման պահանջները գնահատել բավարար

Ընդունել որոշում՝ կողմ ***3 (երեք)*** դեմ ***0 (զրո)*** ձայներով

**3 Ընտրված Մասնակից ճանաչելու և անգործության ժամկետ սահմանելու մասին**

5.1 Հաշվի առնելով գնահատող հանձնաժողովի առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ կայացրած որոշումը, մասնակիցների մասնակցության իրավունքին, որակավորման ու առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերի համապատասխանությանը հրավերի պահանջներին գնահատման թերթիկներով տրված գնահատականները, գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց՝

կողմ ***3 (երեք)*** դեմ ***0 (զրո)*** ձայներով ․

**Գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել**

| | | |
|---|---|---|
| 1 | Գեղամ Կիրակոսյան ՍՊԸ-ին | 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով |
| 2 | Հայկ Ֆարմ ՍՊԸ-ին | 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով |

Սույն կետում նշված չափաբաժինների համար Օրենքի 10-րդ հոդվածի համաձայն սահմանել 10 օրացույցային օր անգործության ժամկետ:

**գնահատող հանձնաժողովի նախագահ**
/դեղատան վարիչ/ Ն. Գասպարյան
**հանձնաժողովի անդամներ**
/դեղագործ/ Ս. Անանյան
/հաշվապահ/ Ն. Դավթյան
**Հանձնաժողովի քարտուղար**
Հարություն Օհանյան